ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

✉ ք. Վանաձոր, Հայքի Հրապարակ 1

☎ /0322/ 4-61-92
Fax /0322/ 2-07-70

թիվ _____

« _____» _____ 2020թ.

ՀԵԼՍԻՆԿՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՍԱՄԲԼԵԱՅԻ
ՎԱՆԱՁՈՐԻ ԳՐԱՍԵՆՅԱԿԻ ՆԱԽԱԳԱՀ Ա. ՍԱՔՈՒՆՑԻՆ
Էլ. փոստ՝ info@hcav.am

Ձեր՝ 31.08.2020թ. գրությանը

Հարգելի պարոն Սաքունց

ՀՀ Լոռու մարզային ենթակայության հանրակրթական ուսումնական հաստատությունները յուրաքանչուր տարի ներկայացնում են թմրամոլության կանխարգելմանը միտված միջոցառումների տարեկան պլան, համաձայն որի դպրոցի ՄԿԱ գծով փոխտնօրենի, դասղեկների, դաստիարակչական աշխատանքների կազմակերպիչների, կենսաբանության և ֆիզկուլտուրային ուսուցիչների նախաձեռնությամբ անց են կացվել բազմապիսի միջոցառումներ, զրույցներ, բաց դասեր, կինոդիտումներ, «Առողջ ապրելակերպ» դասընթացի շրջանակներում համահունչ թեմաներով քննարկումներ: Ըստ ժամանակացույցի աշակերտների հետ նշված թեմաներով քննարկումներ և զեկույցներ են իրականացրել ոստիկանության անչափահասների բաժնի մասնագետները, կից տրամադրում եմ որոշ զեկույցների պատճենները:

Նոր տիպի կորոնավիրուսային հիվանդության համավարակի տարածման կանխարգելման նպատակով հայտարարված արտակարգ դրությամբ պայմանավորված վերոնշյալ միջոցառումները կազմակերպվել և անց են կացվել մինչև ս/թ մարտի 16-ը:

Թմրամոլության դեմ պայքարի ուղղությամբ 2020թ.-ի հունվար-մարտ ժամանակահատվածում «Լոռու մարզային հոգենյարդաբանական դիսպանսեր» ՊՓԲԸ-ի կողմից Վանաձորի բժշկական քոլեջում, Վանաձորի թիվ 1 և թիվ 20 դպրոցներում դիսպանսերի թմրաբան Հովհաննես Ամիրխանյանը հանդես է եկել <<Թմրամոլությունը,

կատ. Ռ. Հարությունյան
հեռ. /0322/ 2-32-99

տարածվածությունը Հայաստանում, դրա դեմ պայքարի, պրոֆիլակտիկայի և բուժման մասին>> զեկույցներով: Կորոնավիրուսային հիվանդությամբ (COVID-19) պայմանավորված 2020թ. մարտ ամսից դպրոցներում թեմատիկ զեկույցները դադարեցած են:

Լոռու մարզային հոգենյարդաբանական դիսպանսերում 2012թ. հուլիս ամսից իրականացվում է մետադոնային փոխարինող բուժման ծրագիրը, որն իրականացվում է ՀՀ առողջապահության նախարարության և Գլոբալ ֆոնդի Մեթադոնային փոխարինող բուժման ծրագրի շրջանակներում: 2020թ. այս ծրագրում ընդգրկված են 14 թմրամոլներ: Ծրագիրն ունի բարձր արդյունավետություն:

15-րդ կետ.

- Զբաղվածության պետական գործակալությունում ներկայումս գործող պետական ծրագրերում կարող են ընդգրկվել այն անձինք, ովքեր անձամբ ներկայացել են Զբաղվածության տարածքային կենտրոններ, ցանկություն են հայտնել աշխատելու և հաշվառվել որպես աշխատանք փնտրողներ: Լոռու մարզի Զբաղվածության կենտրոններ դիմող անձանց հետ տարված հարցազրույցների արդյունքում կատարված վերլուծություններից պարզվել է, որ կենտրոններ դիմող աշխատանք փնտրողները թմրամոլությամբ տառապելու վերաբերյալ տեղեկատվություն չեն տրամադրել, միաժամանակ հայտնում եմ, որ այլ պետական կամ հասարակական կազմակերպությունների կողմից չեն եղել նման անձանց ուղղորդումներ դեպի ՀՀ Լոռու մարզպետարան կամ մարզի զբաղվածության տարածքային կենտրոններ՝ նրանց աշխատանքի տեղավորելու համար:

Միաժամանակ տեղեկացվում է, որ թմրամոլության հակում ունեցող քաղաքացին անձամբ ներկայանալով Զբաղվածության տարածքային կենտրոններ չի հայտարարի իր արատավոր հակումի մասին, նման անձանց ուղղորդումը պետք է լինի ոստիկանությունից՝ ծառայողական աշխատակարգով:

16-րդ կետ.

- Թմրամոլության հակում ունեցող անձանց սոցիալական կարիքների ամբողջական գնահատում և դրանց համարժեք սոցիալական ծառայությունների փաթեթ չի տրամադրվել, քանի որ սոցիալական դեպքի վարման ընթացքում շահառուի կամ նրա ընտանիքի կողմից թաքցվում է թմրամոլության փաստը, որը կարող է պատճառաբանվել անձի հետագա իրավական պատասխանատվությամբ: Նման շահառուներ ՀՀ Լոռու մարզի սոցիալական աջակցության տարածքային գործակալությունները /բաժինը/ չեն ունեցել:

կատ. Ռ. Հարությունյան
հեռ. /0322/ 2-32-99

20-րդ կետ

«Վարձատրվող հասարակական աշխատանքներ» ծրագրի շրջանակներում Լոռու մարզի համայնքներում կառուցվել կամ վերանորոգվել են խաղահրապարակներ հետևյալ համայնքներում.

Զորագետ – համայնքի ներդրումը կազմել է 460.0 հազար դրամ,

Սարալանջ – համայնքի ներդրումը կազմել է 390.0 հազար դրամ,

Շենավան – համայնքի ներդրումը կազմել է 360.0 հազար դրամ:

Ներկայացված ծրագրերին պետության ներդրումը յուրաքանչյուր ծրագրի համար կազմել է 1.5 մլն. դրամ, որից 1.2 մլն. դրամը՝ աշխատավարձի ֆոնդ:

Առողջ ապրելակերպի և ֆուտբոլ մարզաձևի զարգացման նպատակով մարզի 15 համայնքներում ՀՀ Ֆուտբոլի ֆեդերացիայի և համայնքապետարանների համատեղ ֆինանսավորմամբ կառուցվել է արհեստական խոտածածկով մարզադաշտեր /մեկ մարզադաշտի արժեքը մոտ 37մլն դրամ/:

Տարվա ընթացքում սպորտով զբաղվելու համար առավել բարենպաստ պայմաններ ստեղծելու նպատակով սուբվենցիոն և այլ ծրագրերով վերանորոգվել և վերակառուցվել է /մի մասը դեռ ընթացքի մեջ է / թվով 6 մարզադպրոցներ:

Ավարտին է մոտենում Վանաձորի կենտրոնական մարզադաշտի կառուցապատման աշխատանքները:

Առդիր՝ 9 թերթ:

Հարգանքով՝

03/09/2020

X

ԳԱՅԱՆԵ ՄԱՐԿՈՍՅԱՆ

ՄԱՐԶՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Գ. ՄԱՐԿՈՍՅԱՆ

կատ. Ռ. Հարությունյան
հեռ. /0322/ 2-32-99